ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԴԵՐՆ ԱԴԱՊՏԱՑԻԱՅԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ա. Դ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի հոգեբանության տեսության և պատմության ամբիոնի դասախոս

Կենսագործունեության տարբեր պայմաններին մարդու ակտիվ հարմարումը հատկապես սրվում է հասարակության զարգացման անցումային փուլերում: Գիտատեխնիկական առաջընթացի աճող արագությունը, ինֆորմացիայի գերհոսքը մարդու և շրջապատող միջավայրի փոխհարաբերության շարժունությունը ուժեղացնող գործոնների հետ բարձր պահանջներ են ներկայացնում անձի ադապտացիոն մեխանիզմներին: Հասարակական կյանքի բոլոր ոլորտներում տեղի ունեցող շարունակական փոփոխությունները հանգեցնում են երիտասարդների կենսական հեռանկարների, նպատակների, դրանց հասնելու միջոցների և եղանակների ընտրության փոփոխության: Պահանջմունքային համակարգի փոփոխությունները, դրանց բավարարման ուղիների և եղանակների փնտրտուքները պայմանավորում են գործունեության նախկին սխեմայի վերաիմաստավորումն ու արժեվորումը: Հասարակության մեջ տեղի ունեցող սոցիալ-տնտեսական, սոցիալ-մշակութային փոփոխություններով պայմանավորված երիտասարդների պահանջմունքների, արժեքային համակարգի ձևավորման դժվարությունների արդի խնդիրների լուծումը պահանջում է անձնավորության վարքի կարգավորման առանցքային գործոնների նորովի ուսումնասիրություն: Առաջ է գալիս ներդաշնակ և հասուն անձի ձևավորման ու զարգացման նոր ուղիների փնտրման, անձնային ներուժի հնարավորինս բացահայտման, զարգացման անհրաժեշտություն:

Մեր ուսումնասիրության խնդիրն է եղել ուսումնասիրել անձնավորության պահանջմունքային համակարգի առանձնահատկությունները: Պահանջմունքային համակարգի ուսումնասիրության նպատակով օգտագործել ենք հիմնային պահանջմունքների բավարարվածության աստիճանի ախտորոշման մեթոդիկան [2, 421-423]: Մեթոդիկան բացահայտում է 5 խումբ հիմնական պահանջմունքները /նյութական, անվտանգության, սոցիալական, ընդունված և ճանաչված լինելու, ինքնադրսևորման/ ներկայացնող 15 պահանջմունքների արտահայտվածության մակարդակը: Պահանջմունքների ցուցանիշները մշակվել են մաթեմատիկական-վիճակագրական առաջնային վերլուծության մեթոդներով /ընտրական միջին, ընտրական շեղում/ [1, 559-563]: Գիտափորձի ընտրակազմում ընդգրկվել են ՀՊՄՀ-ի երաժշտական կրթության բաժնի 36, ՕԼՖ-ի անգլիական բաժնի 45, մաթեմատիկա և ինֆորմատիկա ֆակուլտետի մաթեմատիկայի բաժնի 27 2-րդ կուրսի ուսանողներ:

Մաթեմատիկների խմբում պահանջմունքների արտահայտվածության ընտրական ցուցանիշների վերլուծությունից պարզվել է, որ՝

1/ Ընտրությունների ամենափոքր խմբային ցուցանիշն այս խմբում գրանցվել է լավ զրուցակիցներ ունենալու ցանկության, այնուհետև ազդեցիկության կարգավիճակ ունենալու, մարդկանց հետ ջերմ հարաբերություններ հաստատե-

լու, ճանաչված և հարգված լինելու պահանջմունքների ընտրությունների ցուցանիշներում: Սա ենթադրում է, որ այս պահանջմունքները գտնվում են բավարարվածության միջին գոտում և դրդապատճառային համակարգում հրատապ չեն:

2/ Տվյալների վերլուծության արդյունքում առանձնացրել ենք հրատապ 5 պահանջմունքները՝ ըստ արտահայտվածության.

1. Ես ցանկանում եմ զբաղվել գործով, որը լրիվ նվիրում է պահանջում:
2. Ես ցանկանում եմ անհաջողություններից, տհաճություններից խուսափել:
3. Ես ցանկանում եմ նյութական բարեհարմարություն ապահովել:
4. Ես ցանկանում եմ իմ ընդունակությունները զարգացնել:
5. Ես ցանկանում եմ ինձ ապագա ապահովել:

Այս ընտրակազմում հրատապ պահանջմունքներից 2-ն անվտանգության, 2-ը՝ ինքնադրսևորման և մեկը՝ նյութական պահանջմունքների խմբերից են: Մաթեմատիկների ընտրակազմում հրատապ պահանջմունքների արտահայտվածության ցուցանիշներում ընդգծված տարբերություններ կան: Խմբային ամենամեծ ցուցանիշը գրանցվել է նվիրում պահանջող գործով զբաղվելու ցանկության տվյալներում: Սա վկայում է մաթեմատիկների մոտ գործունեության ուղղվածության ցայտուն դրսևորման մասին, թեև այս խմբում ևս նվիրում պահանջող գործով զբաղվելու ցանկության արտահայտվածության անհատական տարբերություններ կան: Կարծում ենք, որ վերջինս կարող է լինել նաև մասնագիտական գիտակցված ընտրության, մասնագիտական ուղղվածության ցայտուն դրսևորման, ինչպես նաև մասնագիտությամբ աշխատանք գտնելու պատրաստակամության ցուցանիշ:

3/ Մաթեմատիկների փորձարարական ընտրանու արդյունքների դիսպերսիոն վերլուծությունից պարզ է դառնում.

ա/ հետևյալ պահանջմունքների արտահայտվածության ցուցանիշները հիմնականում հավաքված են ընտրական միջինի շուրջը.

- Ես ցանկանում եմ ունենալ ջերմ հարաբերություններ մարդկանց հետ:
- Ես ցանկանում եմ հասնել ճանաչման և հարգանքի:
- Ես ցանկանում եմ իմ դիրքն ամրապնդել:
- Ես ցանկանում եմ ապրուստի միջոց վաստակել:
- Ես ցանկանում եմ նյութական բարեհարմարություն ապահովել:

Այս ընտրակազմում վերը թվարկված պահանջմունքների ցուցանիշներում ընդգծված անհատական տարբերություններ չեն արտահայտվել: Սա նշանակում է, որ այս պահանջմունքների դրսևորման որոշակի մակարդակ բնութագրական է փորձարկվողներին:

բ/ ընտրական միջինից շեղումները հատկապես մեծ են հետևյալ պահանջմունքների ցուցանիշներում.

- Ես ցանկանում եմ հասկանալի լինել ուրիշներին:
- Ես ցանկանում եմ լավ իրեր գնել:
- Ես ցանկանում եմ ձգտել նորին ու անհայտին:
- Ես ցանկանում եմ զբաղվել գործով, որը լրիվ նվիրում է պահանջում:
- Ես ցանկանում եմ անհաջողություններից, տհաճություններից խուսափել:

Փորձարկվողների անհատական տվյալների մեծ տարբերությունները, ամե-

նայն հավանականությամբ, վկայում են, որ պահանջմունքների այս տեսակների դրսևորման մակարդակում անհատական առանձնահատկություններն ավելի ցայտուն են արտահայտվում: Պետք է ենթադրել, որ մասնագիտական առանձնահատկությունները, կոգնիտիվ ոլորտի և մտածողության բնութագրերը որոշիչ են եղել: Անձնային հատկությունների և պահանջմունքների կարգային համահարաբերակցման արդյունքներից պարզվել է, որ նորին ու անհայտին ձգտման պահանջմունքի դրսևորման մակարդակը պայմանավորված է ընկճվածության, հուզական շարժունության, անզիջողականության, կասկածամտության և դրական ագրեսիվության արտահայտվածության մակարդակով: Անհաջողություններից, տհաճություններից խուսափելու պահանջմունքի դրսևորման մակարդակը պայմանավորված է ռեակտիվ ագրեսիվության, ամոթխածության, վիրավորվողականության, կոնֆլիկտայնության արտահայտվածության մակարդակով:

ՕԼՖ խմբում պահանջմունքների արտահայտվածության խմբային ցուցանիշների վերլուծությունից պարզվել է, որ՝

1/ Ընտրությունների ամենափոքր խմբային միջին ցուցանիշն այս խմբում ևս գրանցվել է լավ զրուցակիցներ ունենալու ցանկության, այնուհետև ճանաչված և հարգված լինելու, մարդկանց հետ ջերմ հարաբերություններ հաստատելու պահանջմունքների ընտրությունների ցուցանիշներում: Ենթադրում ենք, որ այս դեպքում պահանջմունքները գտնվում են բավարարվածության գոտում և հրատապ չեն:

2/ Պահանջմունքների արտահայտվածության ցուցանիշների վերլուծությունից պարզվել է, որ ՕԼՖ խմբում հրատապ պահանջմունքներն են.

1. Ես ցանկանում եմ անհաջողություններից, տհաճություններից խուսափել:
2. Ես ցանկանում եմ նյութական բարեհարմարություն ապահովել:
3.Ես ցանկանում եմ ինձ ապագա ապահովել:
4.Ես ցանկանում եմ իմ ընդունակությունները զարգացնել:
5.Ես ցանկանում եմ վարպետության և կոմպետենտության մակարդակը բարձրացնել:

Ինչպես նկատում ենք, այս ընտրակազմում կարգային բարձր դիրքերում են գտնվում անվտանգության և նյութական պահանջմունքների խմբերը ներկայացնող պահանջմունքները: ՕԼՖ խումբը միակն է, որտեղ նվիրում պահանջող գործով զբաղվելու ցանկությունը ոչ միայն հրատապ պահանջմունքների շարքում բարձր կարգ չէ զբաղեցնում, այլև հնգյակում չէ: Այս փորձարկվողների վարքի մոտիվացիայում անհաջողություններից խուսափելու, ապագա և նյութական բարեհարմարություն ապահովելու ցանկություններն են առանցքային, որոնց զուգահեռ ընդունակությունները զարգացնելու, վարպետության մակարդակը բարձրացնելու պահանջմունքների ցուցանիշները նույնպես բարձր են: Պետք է ենթադրել, որ սա պայմանավորված է մասնագիտության առանձնահատկություններով: Եթե մաթեմատիկների, երաժիշտների դեպքում մասնագիտական ուղղվածությունը խիստ որոշակի է և ցայտուն դրսևորվում է մասնագիտությամբ աշխատանք գտնելու պատրաստակամությունը, ապա այս դեպքում բոլորովին այլ պատկեր է: Օտար լեզվի իմացությունն աշխատանք գտնելու և տարբեր ոլորտներում դրսևորվելու, ապագան կառուցելու ավելի լայն հնարավորություններ է տալիս: Հավանաբար, դա է պատճառը, որ նվիրում պահանջող գործով

զբաղվելու պահանջմունքն այս խմբում ցածր կարգ ունի՝ ի տարբերություն մյուս մասնագիտական խմբերի:

3/ Պահանջմունքների խմբային ցուցանիշների դիսպերսիոն վերլուծությունից պարզվել է, որ հետևյալ պահանջմունքների արտահայտվածության ցուցանիշները հավաքված են ընտրական միջինի շուրջը.

- Ես ցանկանում եմ ինձ ապագա ապահովել:
- Ես ցանկանում եմ հասնել ճանաչման և հարգանքի:
- Ես ցանկանում եմ նյութական բարեհարմարություն ապահովել:
- Ես ցանկանում եմ լավ զրուցակիցներ ունենալ:
- Ես ցանկանում եմ ջերմ հարաբերություններ ունենալ մարդկանց հետ:

ՕԼՖ ընտրակազմում այս պահանջմունքների արտահայտվածության ցուցանշներում նկատելի տարբերություններ չեն գրանցվել: Պետք է ենթադրել, որ բավարարվածության միջին գոտու սահմաններում այս պահանջմունքների դրսևորման մակարդակը տարիքային առանձնահատկություն է:

ՕԼՖ ընտրակազմում անհատական առանձնահատկությունները հատկապես ցայտուն են արտահայտվել հետևյալ պահանջմունքների ցուցանիշներում.

- Ես ցանկանում եմ ազդեցիկության կարգավիճակ ունենալ:
- Ես ցանկանում եմ ուրիշներին հասկանալի լինել:
- Ես ցանկանում եմ զբաղվել գործով, որը լրիվ նվիրում է պահանջում:
- Ես ցանկանում եմ ձգտել նորին ու անհայտին:
- Ես ցանկանում եմ լավ իրեր գնել:

Պետք է ենթադրել, որ այս դեպքում փորձարկվողների ինտելեկտուալ մակարդակի, հուզականային ոլորտի առանձնահատկությունները, ըմբռնման և մտածողության անհատական տարբերությունները, անձնային հատկությունների արտահայտվածության մակարդակը, մասնագիտական ուղղվածության նրբերանգները հատկապես որոշիչ են եղել: Համահարեբակցային վերլուծության արդյունքներից պարզվել է, որ ազդեցիկության կարգավիճակ ունենալու ցանկության դրսևորման մակարդակը պայմանավորված է հարձակվողականության, անզիջողականության, անհանդուրժողականության, վրիժառության արտահայտվածության մակարդակով:

Երաժշտական կրթության բաժնի փորձարկվողների պահանջմունքների ընտրությունների խմբային ցուցանիշների վերլուծությունից պարզվել է, որ՝

1/ Ընտրությունների ամենափոքր խմբային ցուցանիշն այս խմբում ևս արձանագրվել է լավ զրուցակիցներ ունենալու ցանկության, ճանաչված և հարգված լինելու, մարդկանց հետ ջերմ հարաբերություններ հաստատելու, լավ իրեր գնելու պահանջմունքների ընտրությունների ցուցանիշներում:

2/ Երաժիշտների խմբային տվյալների վերլուծության արդյունքում առանձնացվել են հետևյալ 5 հրատապ պահանջմունքները՝ ըստ արտահայտվածության.

1. Ես ցանկանում եմ անհաջողություններից, տհաճություններից խուսափել:
2. Ես ցանկանում եմ զբաղվել գործով, որը լրիվ նվիրում է պահանջում:
3. - Ես ցանկանում եմ նյութական բարեհարմարություն ապահովել:
   - Ես ցանկանում եմ իմ ընդունակությունները զարգացնել:
4. Ես ցանկանում եմ վարպետության և կոմպետենտության մակարդակը

բարձրացնել:

5. Ես ցանկանում եմ ուրիշներին հասկանալի լինել:

Երաժիշտների մոտ հրատապ պահանջմունքների շարքում ընդգրկվել են պահանջմունքային բոլոր խմբերը ներկայացնող պահանջմունքները: Բարձր կարգ զբաղեցնող 2 պահանջմունքների ցուցանիշները գրեթե մոտենում են: Երաժիշտների մոտ, ինչպես և մաթեմատիկների մոտ, արտահայտվածության բարձր մակարդակ ունի նվիրում պահանջող գործով զբաղվելու ցանկությունը: Այս դեպքում ևս ցայտուն դրսևորվում են գործունեության տեսակի, մասնագիտական գիտակցված ընտրության առանձնահատկությունները: Նվիրում պահանջող գործով զբաղվելու ցանկությունը երաժիշտների վարքի մոտիվացիայում առանցքային է, քանի որ երաժիշտը գործունեության այլ տեսակով չի կարող զբաղվել: Այս ընտրակազմի փորձարկվողների դրդապատճառային համակարգում ընդունակությունները զարգացնելու և վարպետության, կոմպետենտության մակարդակը բարձրացնելու պահանջմունքները՝ որպես ինքնադրսևորման, ընդունված և ճանաչված լինելու ցանկության բավարարման ձևեր, նույնպես գերակա դիրք են զբաղեցնում:

3/ Այս ընտրակազմի արդյունքների դիսպերսիոն վերլուծությունից պարզվել է.

ա/ հետևյալ պահանջմունքների արտահայտվածության ցուցանիշները հիմնականում հավաքված են ընտրական միջինի շուրջը.

- Ես ցանկանում եմ ունենալ ջերմ հարաբերություններ մարդկանց հետ:
- Ես ցանկանում եմ լավ զրուցակիցներ ունենալ:
- Ես ցանկանում եմ իմ դիրքն ամրապնդել:
- Ես ցանկանում եմ իմ ընդունակությունները զարգացնել:
- Ես ցանկանում եմ հասնել ճանաչման և հարգանքի:

Սա նշանակում է, որ այս պահանջմունքների դրսևորման մակարդակը երաժիշտների մոտ անհատական առանձնահատկությունների ցայտուն արտահայտմամբ պայմանավորված չէ: Ամենայն հավանականությամբ, այս պահանջմունքների արտահայտվածության որոշակի մակարդակ բնութագրական է փորձարկվողներին՝ պայմանավորված տարիքային առանձնահատկություններով, մասնագիտության և գործունեության պահանջներով:

բ/ ընտրական միջինից շեղումները հատկապես մեծ են հետևյալ պահանջմունքների ցուցանիշներում.

- Ես ցանկանում եմ զբաղվել գործով, որը լրիվ նվիրում է պահանջում:
- Ես ցանկանում եմ ազդեցիկության կարգավիճակ ունենալ:
- Ես ցանկանում եմ ուրիշներին հասկանալի լինել:
- Ես ցանկանում եմ ձգտել նորին ու անհայտին:

Թեև նվիրում պահանջող գործով զբաղվելու ցանկությունն ընդհանրապես երաժիշտների դրդապատճառային համակարգում առանցքային է համարվում, սակայն վերջինիս դրսևորման մակարդակը պայմանավորված է անհատական առանձնահատկություններով:

Անհատական առանձնահատկությունների՝ նորին ու անհայտին ձգտելու պահանջմունքի դրսևորման մակարդակի վրա ունեցած ցայտուն արտահայտվածությունը նկատվել է փորձարարական բոլոր խմբերում՝ անկախ մասնագիտու-

թյունից: Այս դեպքում որոշիչ գործոն է դառնում իմացական մոտիվացիան, հատկապես իմացական հետաքրքրությունները, որոնք անձին դրդում են նորին ու անհայտին:

Ինչպես ցույց են տալիս համահարաբերակցային վերլուծության արդյունքները, երաժիշտների մոտ ազդեցիկության կարգավիճակ ունենալու ցանկության դրսևորման մակարդակը պայմանավորված է ռեակտիվ ագրեսիվության, բռնկվողության, անզիջողականության, վրիժառության արտահայտվածության մակարդակով:

Գիտափորձերի արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս անել հետևյալ եզրակացությունները.

1. Պահանջմունքային համակարգում որևէ պահանջմունքային խմբի հրատապությունը պայմանավորված է մյուս խմբի պահանջմունքների դրսևորման առանձնահատկություններով:

2. Անձնավորության ողջ պահանջմունքային համակարգի՝ որպես ինտեգրալ կառույցի ձևավորվածությունը, տարբեր պահանջմունքների ներդաշնակ հարաբերակցությունը կարելի է դիտարկել որպես հասուն անձնավորության բնութագրման չափանիշ և ադապտացիոն գործընթացի արդյունավետության պայման:

3. Գործունեության և սոցիալական միջավայրի փոփոխվող պայմաններին ադապտացիոն ստրատեգիաների ընտրությունը պայմանավորված է մի կողմից՝ պահանջմունքային խմբերի, պահանջմունքային միևնույն խմբի կազմի մեջ մտնող տարբեր պահանջմունքների դրսևորման մակարդակով, մյուս կողմից՝ անձնային, տարիքային և մասնագիտական առանձնահատկություններով:

4. Քանի որ հրատապ պահանջմունքների հնարավորինս բավարարումն ադապտացիայի արդյունավետության ցուցանիշ է, ապա հիմնային և հրատապ պահանջմունքների իմացությունը թույլ կտա օպտիմալացնել գործունեության իրականացման ընթացքում անձնավորության և շրջապատող միջավայրի ադապտացիան:

5. Ուսումնական գործունեությանն ադապտացիայի արդյունավետությունը կբարձրանա, եթե վերջինիս կազմակերպման եղանակներն ու մեթոդները խթանեն իմացական հետաքրքրություններն ու պահանջմունքները, ընդլայնեն հրատապ պահանջմունքների բավարարման հնարավորությունները, նպաստեն ինքնադրսևորման և ինքնաիրացման ուղիների ընտրությանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ***Немов Р. С.*** Психология, кн. 3.: Психодиагностика, М., Изд. Центр ВЛАДОС, 2007. 631 с.
2. ***Столяренко Л. Д.*** Основы психологии. Практикум, Ростов н/Д, «Феникс», 2006.

РОЛЬ СИСТЕМЫ ПОТРЕБНОСТЕЙ В ПРОЦЕССЕ АДАПТАЦИИ

А. Д. Аракелян

В статье рассматривается роль системы потребностей в процессе адаптации учебной деятельнос-

ти. Представлены результаты экспериментов со студентами. В качестве критерии зрелости рассматривается система потребностей.

THE FUNCTION OF REQUIREMENT SYSTEM IN ADAPTATION PROCESS

A. D. Araqelyan

The function of requirement system in adaptation process is analyzed in this article. The examination of students` requirement system results in different professional groups is presented here. Different requirement features are shown in requirement system.